

04/05/2007  
համար 135 Ն

**«ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԴԻԼԵՐԱՅԻՆ-ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
12-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի  
08.09.09թ. թիվ 267-Ն, 01.12.09թ. թիվ 357-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» ենթակետը, 49-րդ  
հոդվածի 1-ին կետը, դեկլարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով` Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .**

1. Հաստատել «Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի  
գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12-ը` համաձայն  
հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական  
բանկի խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 17-ի ««Արտարժույթի դիլերային առք  
ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը»  
կանոնակարգ 12-ը հաստատելու մասին» թիվ 437Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան  
հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ**

**S.Սարգսյան**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի  
խորհրդի 2007 թվականի մայիսի 4-ի թիվ 135 Ն որոշմամբ

## Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 12

### ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԴԻԼԵՐԱՅԻՆ-ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

#### ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց (այսուհետ՝ արժույթային դիլեր-բրոքերներ), դրանց մասնաճյուղերի լիցենզավորման և գործունեության կարգավորման ընթացակարգերը արտարժույթի դիլերային-բրոքերային գորածառնություններ իրականացնող անձանց աշխատակիցներին ներկայացվող մասնագիտական որակավորման չափանիշները և նրանց քննելու կարգը:
2. Արժույթային դիլեր-բրոքերը իրավաբանական անձ է, որն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) տված լիցենզիայի հիման վրա իրականացնել արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն:
3. Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն է համարվում օրենքին համապատասխան կնքված հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագրի հիման վրա արտարժույթի անկանխիկ առուվաճառքը՝ անմիջապես կամ տարածամկետ վճարելու, որոշակի ժամկետից հետո որոշակի գնով հետ գնելու կամ այլ արտարժույթով փոխանակելու իրավունքով կամ պարտականությամբ, կամ որևէ այլ պայմանով և (կամ) նման գործարքներ իրականացնելու առաջարկությամբ հանդես գալը: Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքով կարող են զբաղվել նաև իրենց անունից և իրենց հաշվին:
4. Արժույթային դիլեր-բրոքերներին արգելվում է իրականացնել այլ գործունեություն՝ բացառությամբ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության՝ համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

#### ԳԼՈՒԽ 2. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԴԻԼԵՐԱՅԻՆ-ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

5. Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիա ստանալու համար լիցենզավորվող անձը Կենտրոնական բանկ ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.
  - 1) լիցենզիա ստանալու մասին հայտ (հավելված 1),
  - 2) կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենները,
  - 3) իրավասու մարմնի որոշման պատճենը իրավաբանական անձի ղեկավարի (գործադիր տնօրեն կամ նման պարտականություններ իրականացնող անձ) նշանակման մասին,

4) տեղեկանք բանկից (բանկերից)՝ ցպահանջ կամ ժամկետային հաշիվներում առնվազն երեք միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի կամ Կենտրոնական բանկի հրապարակած փոխարժեքով դրան համարժեք առաջին խմբի մեջ մտնող արտարժույթի (եվրո, անգլիական ֆունտ ստեռլինգ, ԱՄՆ դոլար, ճապոնական իեն, դանիական կրոն, շվեյցարական ֆրանկ, կանադական դոլար, շվեդական կրոն և ավստրալիական դոլար) առկայության մասին,

5) պետական տուրքի վճարման անդորրագիրը,

6) Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից հաստատված՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),

7) տեղեկանք՝ լիցենզավորվող անձի մասին (հավելված 2),

8) լիցենզիայով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար ներկայացված պատասխանատու անձի (այսուհետ՝ աշխատակից) մասնագիտական որակավորման վկայականի պատճենը: Եթե անձը նախկինում հանձնել է մասնագիտական որակավորման քննություն և դրական արդյունք է ունեցել, սակայն Կենտրոնական բանկի կողմից մասնագիտական որակավորման վկայական նրան չի տրամադրվել, ապա կարող է ներկայացվել արտարժույթի դիլերային առուվաճառքի այն լիցենզիայի կամ լիցենզիայի ներդիրի պատճենը, որում նշված են իր անուն, ազգանունը և անձնագրի տվյալները,

9) տեղեկանք աշխատակցի մասին (հավելված 3):

Եթե արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիա ստանալու համար հայտ ներկայացնողը արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող լիցենզավորված անձ է, ապա սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվում:

10) տարածքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը կամ նոտարական կարգով վավերացված վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը և համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի վկայականի պատճենը:

11) փոստային հասցեի վերաբերյալ տեղեկանք, որում նշված հասցեով լիցենզավորվող անձը համաձայն կլինի ստանալ արտարժույթի դիլերային-բրոքերային առքուվաճառքի լիցենզիան:

6. Արժութային դիլեր-բրոքերների կողմից մասնաճյուղ բացելու համար Կենտրոնական բանկ են ներկայացվում՝

1) մասնաճյուղի լիցենզիա ստանալու հայտ (հավելված 4),

2) գրավոր հայտարարություն նախկինում ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխությունների մասին,

3) տեղեկանք բանկից (բանկերից)՝ ցպահանջ կամ ժամկետային հաշիվներում արժութային դիլեր-բրոքերի և յուրաքանչյուր մասնաճյուղի համար առնվազն երեք միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի կամ Կենտրոնական բանկի հրապարակած փոխարժեքով դրան համարժեք առաջին խմբի մեջ մտնող արտարժույթի (եվրո, անգլիական ֆունտ ստեռլինգ, ԱՄՆ դոլար, ճապոնական իեն, դանիական կրոն, շվեյցարական ֆրանկ, կանադական դոլար, շվեդական կրոն և ավստրալիական դոլար) առկայության մասին,

4) պետական տուրքի վճարման անդորրագիրը,

5) լիցենզիայով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար ներկայացված պատասխանատու անձի (այսուհետ՝ աշխատակից) մասնագիտական որակավորման վկայականի պատճենը: Եթե անձը նախկինում հանձնել է մասնագիտական որակավորման քննություն և դրական արդյունք է

ունեցել, սակայն Կենտրոնական բանկի կողմից մասնագիտական որակավորման վկայական նրան չի տրամադրվել, ապա կարող է ներկայացվել արտարժույթի դիլերային առուվաճառքի այն լիցենզիայի կամ լիցենզիայի ներդիրի պատճենը, որում նշված են իր անուն, ազգանունը և անձնագրի տվյալները,

6) տեղեկանք աշխատակցի մասին (հավելված 3):

7) տարածքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը կամ նոտարական կարգով վավերացված վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը և համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի վկայականի պատճենը:

8) փոստային հասցեի վերաբերյալ տեղեկանք, որում նշված հասցեով լիցենզավորվող անձը համաձայն կլինի ստանալ արտարժույթի դիլեր-բրոքերի մասնաճյուղի լիցենզիան:

6.1. Արժութային դիլեր-բրոքերը կամ նրա մասնաճյուղն իրավունք չունեն գործունեություն ծավալել այն տարածքներում, որոնցում գործում են Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված ֆինանսական կազմակերպությունները (այսուհետ՝ ֆինանսական կազմակերպություններ):

6.2. Արժութային դիլեր-բրոքերի մասնակից չեն կարող լինել.

1) ֆինանսական կազմակերպությունները և նրանց հետ փոխկապակցված անձինք,  
2) ֆինանսական կազմակերպությունների մասնակիցները և նրանց հետ փոխկապակցված անձինք,

3) ֆինանսական կազմակերպությունների ղեկավարները և աշխատակիցները:  
Սույն կանոնակարգի իմաստով անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանց կապվածությունը և (կամ) հարաբերությունները համապատասխանում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 8-րդ հոդվածի դրույթներին:

6.3. Արժութային դիլեր-բրոքերի աշխատակից չեն կարող լինել.

1) ֆինանսական կազմակերպությունների մասնակիցները և նրանց հետ փոխկապակցված անձինք,  
2) ֆինանսական կազմակերպությունների ղեկավարները և աշխատակիցները:

7. Արժութային դիլեր-բրոքերի գործունեության վայրի փոփոխման դեպքում Կենտրոնական բանկ ներկայացվում են՝

1) գործունեության վայրի փոփոխման հայտ (հավելված 4),

2) գրավոր հայտարարություն նախկինում ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխությունների մասին,

3) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

4) տարածքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը կամ նոտարական կարգով վավերացված վարձակալության (ենթավարձակալության), կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը և համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի վկայականի պատճենը:

5) փոստային հասցեի վերաբերյալ տեղեկանք, որում նշված հասցեով լիցենզավորվող անձը համաձայն կլինի ստանալ արտարժույթի դիլեր-բրոքերի գործունեության վայրի փոփոխման թույլտվությունը:

8. Հայտարարագրերը և Կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը պետք է ստորագրված և կնքված լինեն (կնիքի առկայության դեպքում) լիցենզավորվող անձի իրավասու մարմնի կողմից: Ընդ որում, պատճենները պետք է ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ: Ներկայացվող տեղեկանքների վաղեմությունը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահին չպետք է գերազանցի մեկամսյա ժամկետը:

9. Վերոհիշյալ փաստաթղթերը Կենտրոնական բանկ մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան 30-օրյա ժամկետում, Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում ներկայացված հայտը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ: «Արժութային դիլեր-բրոքերի լիցենզավորման համար նշանակություն ունեցող փաստեր պարզաբանելու նպատակով 30-օրյա ժամկետը Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կարող է կասեցվել, բայց ոչ ավելի, քան մեկ անգամ և առավելագույնը երեք ամիս ժամկետով, ընդ որում, անհրաժեշտ փաստերը պարզաբանելուց հետո հայտի քննության ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և 30-օրյա ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը: Լիցենզիա տրամադրելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից ետոյա ժամկետում Կենտրոնական բանկը լիցենզավորվող անձին տալիս է լիցենզիա (հավելված 5), ինչպես նաև լիցենզիայով նախատեսված աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձի մասին լիցենզիայի ներդիր (հավելված 6): Գործունեության վայրի փոփոխությանը թույլտվություն տալու դեպքում լիցենզիայի նոր ներդիր չի տրամադրվում, և նախկին լիցենզիան վերաձևակերպվում է միևնույն համարի նոր լիցենզիայով:

10. Կենտրոնական բանկի խորհուրդը մերժում է ներկայացված հայտը, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված, հակասում են օրենքներին և այլ իրավական ակտերին,

2) հայտ ներկայացնող անձը կամ աշխատակիցը օրենքի (կամ կանոնադրության) ուժով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով իրավունք չունի զբաղվել արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքով:

10.1. Սույն կանոնակարգի 10-րդ կետի առաջին ենթակետի հիմքով լիցենզիա ստանալու հայտը մերժվում է, եթե այդ մասին պատշաճ ձևով նախազգուշացումը Կենտրոնական բանկի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր: Ընդ որում, Կենտրոնական բանկը ներկայացված փաստաթղթերի թերի, ակնհայտ կեղծ, խեղաթյուրված և (կամ) օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող լինելու վերաբերյալ նախազգուշացումն ուղարկում է ներկայացված փաստաթղթերը ստանալու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով թերի, ակնհայտ կեղծ, խեղաթյուրված և (կամ) օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող ներկայացված բոլոր փաստաթղթերը: Եթե հայտը քննելու ընթացքում հայտում և (կամ) դրան կից փաստաթղթերում ներկայացված տեղեկություններում տեղի են ունեցել փոփոխություններ, ապա հայտատուն ներկայացնում է նաև փոփոխված տեղեկությունները՝ մինչև Կենտրոնական բանկի կողմից հայտը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ որոշման կայացումը: Սույն կետով նշված դեպքերում լիցենզիա ստանալու հայտը Կենտրոնական բանկ ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և (կամ) պահանջվող փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրը:

11. Հայտը մերժելու դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից հնգօրյա ժամկետում Կենտրոնական բանկն այդ մասին տեղեկացնում է հայտատուին՝ նշելով մերժման հիմքերը:

12. Լիցենզիա տրամադրելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը Կենտրոնական բանկը անվավեր է ճանաչում, եթե պարզվում է, որ սույն գլխով նախատեսված և հայտատուի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում առկա է կեղծ տեղեկատվություն:

**ԳԼՈՒԽ 3. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐ-ԲՐՈՔԵՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ  
ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ  
ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

13. Արժուքային դիլեր-բրոքերի աշխատակիցը պետք է ունենա Կենտրոնական բանկի կողմից տրված մասնագիտական որակավորման վկայական (այսուհետ՝ որակավորման վկայական), որը ստանալու համար պետք է բավարարի հետևյալ մասնագիտական չափանիշներին.

1) Հայաստանի Հանրապետության արժուքային օրենքների և այլ իրավական ակտերի իմացություն,

2) Կենտրոնական բանկի կողմից արժուքային դիլեր-բրոքերների նկատմամբ իրականացվող ստուգումների և վերահսկողության, ինչպես նաև արժուքային դիլեր-բրոքերներին պատասխանատվության ենթարկելու կարգի ու պայմանների վերաբերյալ իմացություն,

3) արժուքային դիլեր-բրոքերների կողմից իրականացվող արժուքային գործառնությունների իմացություն:

14. Արժուքային դիլեր-բրոքերի աշխատակցի որակավորման վկայական ստանալու համար դիմող անձանց (այսուհետ՝ թեկնածուներ) մասնագիտական համապատասխանության քննությունն (այսուհետ՝ քննություն) անցկացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեստավորման ծառայության (այսուհետ՝ տեստավորման ծառայություն) կամ Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ այլ կազմակերպության կողմից:

15. Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ քննություններն այլ կազմակերպությունների կողմից անցկացվելու դեպքում քննության տեստերի կազմման, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարման, քննություններին մասնակցելու համար թեկնածուների հերթագրման, փաստաթղթերի ընդունման, քննությունների անցկացման, քննության արդյունքների ամփոփման, բողոքարկման, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը սահմանվում է տվյալ կազմակերպության կողմից՝ համաձայնեցնելով Կենտրոնական բանկի հետ:

16. Գրավոր քննությունն անցկացվում է համակարգչային ծրագրով՝ տեստային եղանակով: Տեստը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը մշակվում է Կենտրոնական բանկի կողմից: Հարցերը, ինչպես նաև դրանցում կատարվող լրացումները և փոփոխությունները հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի կողմից:

17. Տեստը պարունակում է 30 հարց: Տեստին պատասխանելու համար տրվում է 45 րոպե: Տեստի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է մի քանի պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Տեստի հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր:

18. Տեստերի պատասխանների գնահատումն ու ամփոփումը կատարվում է հետևյալ կերպ. եթե թեկնածուն հավաքել է

1) մինչև 25 միավոր, ապա թեկնածուն համարվում է բացասական արդյունք ապահոված,

2) 25 և ավելի միավոր, ապա թեկնածուն համարվում է դրական արդյունք ապահոված, և նրան տրվում է համապատասխան որակավորման վկայական:

19. Քննության բացասական արդյունք ապահոված թեկնածուները կրկին կարող են դիմել մասնակցելու քննությանը՝ համապատասխան որակավորման վկայական ստանալու համար:

20. Քննությանը մասնակցելու համար թեկնածուները պետք է նախապես հերթագրվեն: Թեկնածուները քննությանը մասնակցելու համար կարող են հերթագրվել Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում տվյալներ մուտքագրելով կամ հեռախոսով:

1) Հերթագրվելու նպատակով յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում են քննության ստույգ օրեր, որի մասին տեղեկությունները հրապարակվում են Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ մինչև տվյալ եռամսյակի առաջին ամսվան նախորդող ամսվա 10-ը:

2) Թեկնածուները Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում տեղադրված հեռախոսահամարով կարող են հերթագրվել ցանկացած օր և ցանկացած ժամի՝ թողնելով համապատասխան հաղորդագրություն՝ ստորև նշված տեղեկությունների վերաբերյալ.

ա. անուն, ազգանուն,

բ. որակավորման տեսակ,

գ. քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ՝ ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),

դ. հեռախոսահամար:

Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի միջոցով հերթագրվելու դեպքում թեկնածուները, բացի սույն ենթակետում նշված տվյալներից, պետք է հայտնեն նաև անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի և էլեկտրոնային փոստի (առկայության դեպքում) վերաբերյալ տեղեկատվություն:

3) Թեկնածուի կողմից նշված օրը և (կամ) ժամին քննության անցկացման անհնարինության դեպքում կամ թեկնածուի կողմից քննությանը մասնակցելու օր և (կամ) ժամ չնշելու դեպքում տեստավորման ծառայության աշխատակիցը թեկնածուի՝ Կենտրոնական բանկում հերթագրվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է թեկնածուին քննության անցկացման հնարավոր առաջիկա օրվա և (կամ) ժամի մասին:

4) Թեկնածուները քննությանը մասնակցում են՝ քննության օրը ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

ա. անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և դրա պատճենը,

բ. պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

21. Քննությունն անցկացվում է առանձնացված սենյակում, որը վերահսկվում է տեսախցիկների միջոցով:

1) Թեկնածուին թույլատրվում է մուտք գործել քննության անցկացման սենյակ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի ներկայացման դեպքում՝ ըստ ցուցակի նստեցնելով համապատասխան համակարգչի մոտ: Ուշացած թեկնածուների համար քննության տևողությունը չի երկարաձգվում:

2) Թեկնածուներին տրվում են բացատրություններ քննության անցկացման հետ կապված տեխնիկական հարցերի վերաբերյալ:

3) Քննության սկիզբը հայտարարելուց հետո թեկնածուն ծանոթանում է առաջադրանքներին և յուրաքանչյուր հարցի (խնդրի) ենթադրյալ պատասխաններից ընտրում է մեկ (իր կարծիքով՝ նշվածներից առավելագույնս ճիշտ) պատասխան:

4) Քննության ժամանակ թեկնածուին արգելվում է օգտվել տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութերից, էլեկտրոնային սարքերից (բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային հաշվիչների), ինչպես նաև աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, դուրս գալ սենյակից: Եթե թեկնածուն ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված: Նշված պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում թեկնածուն զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից և համարվում է բացասական արդյունք ապահոված:

5) Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև քննության առաջադրանքները կատարելու համար սահմանված ժամանակը սպառվելուց հետո թեկնածուին տրվում է իր հանձնած տեստի արդյունքների վերաբերյալ հաշվետվություն (երկու օրինակից), որտեղ արտացոլվում են թեկնածուի միավորները տոկոսային արտահայտությամբ: Հաշվետվությունները ստորագրվում են թեկնածուի կողմից. մեկ օրինակը մնում է Կենտրոնական բանկում, մյուսը տրվում է թեկնածուին:

22. Տեստերի հարցերի պատասխանների արդյունքները (ելնելով համակարգչային տվյալներից) հաստատում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով):

23. Թեկնածուները կարող են բողոքարկել անցկացված քննության արդյունքները քննության անցկացման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով Կենտրոնական բանկ՝ համաձայն հավելված 12-ի, կամ դիմումը լրացնելով Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում: Դիմումն ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը տեղեկացնում է բողոքարկողին բողոքարկման արդյունքների մասին:

23.1. Որակավորման վկայականը տրվում է քննության դրական արդյունք ապահոված մասնակիցներին թղթային ձևով (համաձայն հավելված 8-ի)՝ քննությունը հանձնելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

23.2 Որակավորման վկայականը տրվում է դրա ստորագրման պահից հաշված երեք տարի ժամկետով:

23.3. Որակավորված անձինք որակավորման վկայականը կորցնելու դեպքում կարող են այդ մասին գրավոր հայտնել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով գրավոր դիմում Կենտրոնական բանկի նախագահի անունով: Դիմումն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում որակավորված անձին տրվում է որակավորման նոր վկայական՝ «Կրկնօրինակ» նշագրումով, իսկ կորցրած վկայականը համարվում է անվավեր:

#### **ԳԼՈՒԽ 4. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐ-ԲՐՈՋԵՐՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՏՐԱՍԱԴՐՈՒՄԸ**

24. Աշխատակցի փոփոխության դեպքում լիցենզիայի ներդիր ստանալու նպատակով արժութային դիլեր-բրոքերը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) լիցենզիայի ներդիր տրամադրելու հայտ (հավելված 9),

2) աշխատակցի (աշխատակիցների) մասնագիտական որակավորման վկայականի պատճենը,

3) տեղեկանք աշխատակցի մասին (հավելված 3),

4) պետական տուրքի վճարման անդորրագիրը (երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ներդիրի համար),

5) Կենտրոնական բանկի տրամադրած լիցենզիայի ներդիրի բնօրինակը:

25. Եթե անձը նախկինում հանձնել է մասնագիտական որակավորման քննություն և դրական արդյունք է ունեցել, սակայն Կենտրոնական բանկի կողմից

մասնագիտական որակավորման վկայական նրան չի տրամադրվել, սպա կարող է ներկայացվել արտարժույթի դիլերային առուվաճառքի այն լիցենզիայի կամ լիցենզիայի ներդիրի պատճենը, որում նշված են իր անունը, ազգանունը և անձնագրի տվյալները:

26. Հայտը ներկայացնելու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը տրամադրում է լիցենզիայի ներդիրը կամ սույն կանոնակարգի 10-րդ կետով նախատեսված դեպքերում մերժում է ներկայացված հայտը:

#### **ԳԼՈՒԽ 5. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐ-ՔՐՈՔԵՐՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՍՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ**

27. Լիցենզիաների ձևերը խիստ հաշվառման փաստաթղթեր են, որոնք պահպանվում են Կենտրոնական բանկի՝ արժույթային դիլեր-բրոքերների լիցենզավորման գործընթացով զբաղվող համապատասխան ստորաբաժանման կողմից:

28. Կենտրոնական բանկի՝ արժույթային դիլեր-բրոքերների լիցենզավորման գործընթացով զբաղվող համապատասխան ստորաբաժանումը վարում է լիցենզիայի գրանցամատյաններ, որոնցում պետք է նշվեն լիցենզավորված անձի անվանումը, լիցենզիա տրամադրելու կամ ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման ամսաթիվը և համարը, լիցենզիայի համարը, **գործունեության վայրը**, լիցենզիայի տրման ամսաթիվը: Նշված ստորաբաժանումը յուրաքանչյուր լիցենզավորված անձի համար կազմում է անհատական գործ, որին կարվում է նաև լիցենզիայի գործողության դադարեցման հետևանքով վերադարձված լիցենզիան:

#### **ԳԼՈՒԽ 6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ, ՆԵՐԴԻՐԻ ԿԱՄ ՍԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՍՏԴՐՈՒՄԸ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ**

29. Լիցենզիայի, ներդիրի կամ մասնագիտական որակավորման վկայականի կորստի (կորցնել, ոչնչանալ և այլն) դեպքում հայտատուն կրկնօրինակը ստանալու համար դիմում է ներկայացնում Կենտրոնական բանկ՝ նախօրոք այդ մասին հայտարարություն տալով զանգվածային լրատվության միջոցով:

30. Լիցենզիան, ներդիրը կամ մասնագիտական որակավորման վկայականը օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում հայտատուն այդ մասին նույնպես հայտ է ներկայացնում Կենտրոնական բանկ՝ կրկնօրինակը ստանալու համար: Կրկնօրինակը հայտատուին տրվում է նրանից ոչ պիտանի դարձած լիցենզիան, ներդիրը կամ վկայականը վերցնելուց հետո:

31. Լիցենզիաների, ներդիրների կամ մասնագիտական որակավորման վկայականների կրկնօրինակների վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրում:

32. Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնող անձի վերակազմակերպման, նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից 15-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել լիցենզիայի վերաձևակերպման համար դիմում՝ դրան կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը: Լիցենզիայի վերաձևակերպման ժամանակ Կենտրոնական բանկը լիցենզիայի գրանցամատյանում կատարում է համապատասխան փոփոխություններ:

33. Լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզիայի կամ ներդիրի կրկնօրինակ տալու համար գանձվում է պետական տուրք՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

34. Սույն գլխով նախատեսված հայտերը բավարարվում են կամ սույն կանոնակարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում մերժվում՝ դրանք Կենտրոնական բանկ ներկայացնելուց 15 աշխատանքային օրվա ընթացքում:

#### **ԳԼՈՒԽ 7. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐ-ԲՐՈՔԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

35. Օրենքով սահմանված հիմքերով արժութային դիլեր-բրոքերների կամ դրանց մասնաճյուղերի գործունեությունը Կենտրոնական բանկը կարող է դադարեցնել լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

36. Արժութային դիլեր-բրոքերի դիմումի հիման վրա (որին կցվում է նաև լիցենզիայի բնօրինակը) արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիան Կենտրոնական բանկը ուժը կորցրած է ճանաչում՝ դիմումը ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում:

37. Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման պատճենը ստանալով՝ լիցենզիան վերադարձվում է Կենտրոնական բանկին մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

#### **ԳԼՈՒԽ 8. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐ-ԲՐՈՔԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

38. Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն կարող են իրականացնել միայն Կենտրոնական բանկի կողմից տրամադրված լիցենզիաների ներդիրներում ընդգրկված աշխատակիցները:

39. Արժութային դիլեր-բրոքերները պարտավոր են գործունեության վայրում ունենալ իրենց գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերը կամ պատճենները:

40. Արժութային դիլեր-բրոքերները իրենց գործարքները պետք է իրականացնեն Կենտրոնական բանկի պահանջներին բավարարող համապատասխան ծրագրով ապահովված համակարգչային սարքավորման միջոցով:

41. Արժութային դիլեր-բրոքերների իրականացրած բոլոր գործառնությունները պարտադիր հաշվառվում են նրանց ֆիսկալային հաշվետվությունում, այն է՝

- 1) արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործարքները,
- 2) արժութային դիլեր-բրոքերի սեփականատիրոջ կողմից ավելացված կամ պակասեցված գումարները (շրջանառության միջոցների ավելացում կամ պակասեցում),
- 3) արժութային դիլեր-բրոքերների գործունեության հետ կապված այլ գործառնությունները:

42. Արժութային դիլեր-բրոքերները պարտավոր են յուրաքանչյուր շաբաթ, մինչև հաջորդ շաբաթվա չորեքշաբթի օրը, Կենտրոնական բանկ ներկայացնել իրականացված արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի վերաբերյալ շաբաթական հաշվետվություն՝ համաձայն հավելված 10-ի: Դրանք կարող են ներկայացվել էլեկտրոնային փոստով կամ ՍԻ-ԲԻ-ԷՅ-նեթ համակարգի միջոցով,

կամ էլեկտրոնային կրիչներով («Մայքրոսոֆթ Էքսել» տարբերակով), իսկ այդ ձևերով ներկայացնելու անհնարինության դեպքում՝ թղթային տարբերակով:

43. Արժութային դիլեր-բրոքերները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվետվություններ ներկայացնելիս օգտագործում են իրենց իրականացրած արտարժույթի առք ու վաճառքի միջին փոխարժեքները՝ առանձին առքի և առանձին վաճառքի համար, յուրաքանչյուր արտարժույթի տեսակի գծով, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Մ\Phi\text{առք} = (Ա\delta 1 * Ա\Phi 1 + Ա\delta 2 * Ա\Phi 2 + \dots + Ա\delta n * Ա\Phi n) / (Ա\delta 1 + Ա\delta 2 + \dots + Ա\delta n),$$

$$Մ\Phi\text{վաճառք} = (Վ\delta 1 * Վ\Phi 1 + Վ\delta 2 * Վ\Phi 2 + \dots + Վ\delta n * Վ\Phi n) / (Վ\delta 1 + Վ\delta 2 + \dots + Վ\delta n),$$

որտեղ՝

ՄՓառք (ՄՓվաճառք) - առքի (վաճառքի) միջին փոխարժեք,

Աճi (Վճi) - «i»-րդ գործարքի առքի (վաճառքի) ծավալ,

ԱՓi (ՎՓi) - «i»-րդ գործարքի առքի (վաճառքի) փոխարժեք,

«i» - փոփոխական թիվ, որը փոխվում է 1-ից «n»:

44. Արժութային դիլեր-բրոքերները պարտավոր են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վճարել տարեկան պետական տուրքը և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի օգտին վճարման ենթակա եռամսյակային պարտադիր վճարները: Արժութային դիլեր-բրոքերները պարտավոր են յուրաքանչյուր տարի՝ տարեկան պետական տուրքի վճարման ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերջնաժամկետից 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ ներկայացնել հաշվետվություն տարեկան պետական տուրքի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի օգտին վճարված պարտադիր վճարների վերաբերյալ համաձայն Հավելված 11-ի՝ կից ներկայացնելով հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վճարված հերթական տարեկան պետական տուրքի, ինչպես նաև դրա վճարումն ուշացնելու համար վճարված տույժի (առկայության դեպքում) վճարումը հավաստող փաստաթղթերի (պետական տուրքի վճարման անդորրագիր, վճարման հանձնարարական և այլն) սքան արված տարբերակները: Հաշվետվությունները կարող են ներկայացվել էլեկտրոնային փոստով, Սի-Բի-Էյ-Նեթ համակարգի միջոցով կամ էլեկտրոնային կրիչներով («Մայքրոսոֆթ Էքսել» տարբերակով), իսկ այդ ձևով ներկայացնելու անհնարինության դեպքում՝ թղթային տարբերակով:

#### **ԳԼՈՒԽ 9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏԱՆ ՀԱՍԱՐ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐ-ԲՐՈՔԵՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

45. Արժութային դիլեր-բրոքերները պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

#### **ԳԼՈՒԽ 10. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

46. Սույն կանոնակարգի կրճատ անվանումն է՝ «ԿԲ կանոնակարգ 12»:

## ԳԼՈՒԽ 11. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

47. Արժութային դիլերներ-բրոքերների այն աշխատակիցները, որոնք չունեն մասնագիտական որակավորման վկայական և արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն են իրականացնում որպես աշխատակից լիցենզիայի ներդիրում ընդգրկված լինելու հիման վրա, ինչպես նաև նախկինում տրամադրված անժամկետ մասնագիտական որակավորման վկայականներ ունեցող աշխատակիցները մինչև 2009 թվականի մայիսի 15-ը Կենտրոնական բանկում պետք է հանձնեն մասնագիտական որակավորման քննություն և ստանան նոր վկայական: Վերջինիս բացակայության դեպքում նշված օրվանից նրանք չեն կարող իրականացնել արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն:

48. Սույն կանոնակարգի իմաստով՝ մինչև 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ուժի մեջ մտնելը արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք (արժութային դիլեր-բրոքերներ) համարվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով որպես գործունեության տեսակ նախատեսված արտարժույթի դիլերային առուվաճառք իրականացնող անձինք (արժութային դիլերներ):

**Հավելված 1**

«Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» հավելվածի

**ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԴԻԼԵՐԱՅԻՆ-ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԱՌՈՎԱՃԱՌՔԻ  
ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՏ**

Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ՝

պարոն \_\_\_\_\_

Խնդրում եմ տրամադրել արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի  
լիցենզիա:

Լիցենզավորվող անձի անվանումը \_\_\_\_\_

Կազմակերպական-իրավական ձևը \_\_\_\_\_

Գտնվելու վայրը \_\_\_\_\_

Գործունեության վայրը \_\_\_\_\_

Կից ներկայացնում եմ (հերթական դասավորությամբ նշել ներկայացվող փաստաթղթերը).

1. \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_

Դիմող՝ \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

Կ. Տ.

**ՏԵՂԵԿԱՆՔ**  
**Լիցենզավորվող անձի մասին**

Ներքոհիշյալն այն նվազագույն տեղեկատվությունն է, որը Դուք պարտավոր եք ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

<b>1. Լիցենզավորվող անձի տվյալներ</b>				
1.1. Անվանումը				
1.2. Գտնվելու վայրը				
1.3. ՀՎՀՀ-ն (ռեզիդենտների համար)				
1.4. Գրացման ամսաթիվը _____ վայրը _____ օր/ամիս/տարի				
<b>2. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում լիցենզավորվող անձի՝ ձայնի իրավունք տվող մասնակցությունների վերաբերյալ</b>				
Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ-ն (ռեզիդենտների համար)	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (ՀՀ դրամով)	Մասնակցության չափը (%)	
1.				
2.				
<b>3. Տեղեկություններ լիցենզավորվող անձի մասնակիցների վերաբերյալ</b>				
<b>3.1. Մասնակցություն ունեցող իրավաբանական անձինք</b>				
Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ-ն (ռեզիդենտների համար)	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (ՀՀ դրամով)	Մասնակցության չափը (%)	
1.				
2.				
<b>3.2. Մասնակցություն ունեցող ֆիզիկական անձինք</b>				
Անունը, ազգանունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Բնակության վայրը	Մասնակցության չափը (ՀՀ դրամով)	Մասնակցության չափը (%)	
1.				
2.				
<b>4. Այլ տեղեկատվություն</b>				
4.1. Արդյո՞ք կազմակերպությունը ունի կամ ունեցել է ՀՀ տարածքում գործող բանկի կամ վարկային կազմակերպության հանդեպ ժամկետանց պարտավորություններ				
Այո		Ոչ		

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասնությունները (գումար, ժամկետ, այլ)

4.2. Արդյո՞ք նախորդող երեք տարիների ընթացքում լիցենզավորվող անձը կամ իր կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող անձինք կամ իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձինք լիցենզիայի պայմանները կամ արժույթային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները խախտելու համար զրկվել են արտարժույթի առուվաճառք, արտարժույթի դիլերային առուվաճառք իրականացնելու կամ արտարժույթի առուվաճառքի սակարկություններ կազմակերպելու լիցենզիայից (սկսած 2005 թ. հունիսի 28-ից)

Այո

Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասնությունները

5. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել օրենքով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևէ փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Անուն, ազգանուն \_\_\_\_\_

Ստորագրություն \_\_\_\_\_

Ամսաթիվ \_\_\_\_\_  
օր/ամիս/տարի

Կ. Տ.

**Հավելված 3**

«Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» հավելվածի

**ՏԵՂԵԿԱՆՔ  
Աշխատակցի մասին**

*Ներքոհիշյալն այն նվազագույն տեղեկատվությունն է, որը Դուք պարտավոր եք ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:*

<b>1. Անձնական տվյալներ</b>				
1.1. Անունը, ազգանունը, հայրանունը				
1.2. Ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի)				
1.3. Քաղաքացիությունը				
1.4. Անձնագրի սերիան և համարը				
1.5. Սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)				
1.6. Բնակության վայրը (մշտական և բնակության տվյալ պահին)				
1.7. Հեռախոսահամարը (բնակության վայրի և բջջային)				
1.8. Էլեկտրոնային փոստի հասցեն				
<b>2. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում ձայնի իրավունք տվող մասնակցությունների վերաբերյալ</b>				
Կազմակերպության անվանումը	Գ-տնվելու վայրը	Մասնակցության չափը (ՀՀ դրամով)	Մասնակցության չափը (%)	
1.				
2.				
<b>3. Աշխատանքային գործունեությունը (վերջին 5 տարվա համար)</b>				
Կազմակերպության անվանումը	Գ-տնվելու վայրը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը	Պարտականությունները
1.				
2.				
<b>4. Նշեք Ձեզ անձամբ ճանաչող կամ փոխկապակցված՝ ֆինանսաբանկային համակարգում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները, որոնք, անհրաժեշտության դեպքում, կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ (եթե այդպիսիք կան)</b>				
Անունը, ազգանունը	Աշխատանքի վայրը, պաշտոնը	Հասցեն	Հեռախոսը	

1.			
2.			
<p>5. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:</p> <p>Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:</p>			
Ստորագրություն		Ամսաթիվ (օր/ամիս/տարի)	

**Հավելված 4**

«Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» հավելվածի

**ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐ-ԲՐՈՔԵՐԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԼԻՑԵՆԶԻԱ  
ՏՐԱՍՎԱԴՐԵԼՈՒ ԿԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ**

Հայաստանի Հանրապետության  
Կենտրոնական բանկի նախագահ՝

պարոն -----

Խնդրում եմ տրամադրել լիցենզիա՝ արտարժույթի դիլերային-բրոքերային  
առուվաճառքի գործունեությունը -----  
հասցեում իրականացնելու համար՝ կապված

նոր մասնաճյուղ հիմնելու,

գործունեության վայրի փոփոխման հետ (ընդգծել):

Կից ներկայացնում եմ (հերթական դասավորությամբ նշել ներկայացվող փաստաթղթերը).

1. \_\_\_\_\_
2. \_\_\_\_\_
3. \_\_\_\_\_

-----  
(արժույթային դիլեր-բրոքերի անվանումը)

-----  
(լիցենզիայի համարը, տրման ամսաթիվը)\_

-----  
(անուն, ազգանուն և ստորագրություն)

Կ. Տ.

**Հավելված 5**

«Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» հավելվածի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ**

Լիցենզիան տրվել է  
Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի խորհրդի  
\_\_\_\_\_ 20 \_թ.  
թիվ ----- որոշմամբ

***Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիա թիվ -----***

Սույն լիցենզիան տրվում է -----  
(լիցենզավորված անձի անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը)  
արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն  
իրականացնելու համար:

Գտնվելու վայրը՝

Գործունեության վայրը՝

Լիցենզիան տրված է անժամկետ:

Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ՝

-----  
Կ.Տ.

• Լիցենզիայում փոփոխություններ կատարելու դեպքում համապատասխան որոշման ամսաթիվն ու համարը նշվում են լիցենզիայի վերին աջ անկյունում:

Հավելված 6

«Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» հավելվածի

**ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԴԻԼԵՐԱՅԻՆ-ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԱՌՈՎԱՃԱՌՔԻ ԹԻՎ -----  
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ ԹԻՎ -----**

*Լիցենզիայով նախատեսված աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձի (անձանց) մասին*

Անունը, ազգանունը, անձնագրի սերիան և համարը

1. \_\_\_\_\_
2. \_\_\_\_\_

Սույն ներդիրը -----  
(արժույթային դիլեր-բրոքերի անվանումը)

արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի թիվ ----- լիցենզիայի  
(տրված՝----- 20 \_ թ.) անբաժանելի մասն է:

Հաստատում եմ՝  
Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ՝

----- 20 \_ թ.  
Կ.Տ.

ուժը կորցրել է 01.12.09թ. թիվ 357-Ն որոշմամբ

Հավելված 7

«Արտարժույթի դիլերային բրոքերային առուվաճառքի գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» հավելվածի

**ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ Ե ՄԱՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՑ**

Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ՝

պարոն \_\_\_\_\_

\_\_\_\_\_ Խնդրում եմ բույլատրել մասնակցելու որակավորման քննությանը՝  
արժուրային դիլեր բրոքերի աշխատակցի մասնագիտական որակավորման  
վկայական ստանալու նպատակով:

Կից ներկայացնում եմ (հերթական դասավորությամբ նշել ներկայացվող փաստաթղթերը):

- 1. \_\_\_\_\_
- 2. \_\_\_\_\_
- 3. \_\_\_\_\_

Գ ի մ ո ղ՝ \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

**Հավելված 9**

«Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» հավելվածի

**ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐՂԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՅՏ**

Հայաստանի Հանրապետության  
Կենտրոնական բանկի նախագահ՝

պարոն -----

Խնդրում եմ տրամադրել լիցենզիայով նախատեսված աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձի (անձանց) մասին լիցենզիայի ներդիր՝ կապված.

----- - ին ներդիրում ընդգրկելու

(աշխատակցի անունը, ազգանունը)

----- - ին ներդիրից հանելու հետ:

(աշխատակցի անունը, ազգանունը)

Կից ներկայացնում եմ (հերթական դասավորությամբ նշել ներկայացվող փաստաթղթերը).

1. \_\_\_\_\_
2. \_\_\_\_\_
3. \_\_\_\_\_

-----  
(արժույթային դիլեր-բրոքերի անվանումը)

-----  
(լիցենզիայի համարը, տրման ամսաթիվը)

-----  
(անուն, ազգանուն և ստորագրություն)